«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ- «ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ-ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ- ՄԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱՐԶ- ԼՈՌԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ- ԱԼԱՎԵՐԴՈՒ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 8 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ Գ. ԷՄԻՆՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ——————————————————————3

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ——————————————————————4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ——————————————————————15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ——————————————————————16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Արևմտահայ գրականության ուսուցումը հիմնական և ավագ դպրոցում դյուրին չէ, դժվարությամբ է յուրացվում սովորողի կողմից, որովհետև արևմտահայերենը դժվար է հաղթահարվում բառապաշարի և քերականական առանձնահատկությունների պատճառով, և ստեղծագործության գաղափարը միանգամից հասկանալի չի դառնում:
Արևմտահայ բանաստեղծ Պետրոս Դուրյանի քնարերգության հմայքին սովորողներին հաղորդակից դարձնելը ուսուցչի համար առաջնային խնդիր է:
Հանճարեղ բանաստեղծի ստեղծագործությունների ուսուցումը մատչելի և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է հանդես բերել ուրույն մոտեցում, կատարել ստեղծագործական աշխատանք, գրավել սովորողի ուշադրությունը, նպաստել, որ սովորողը ինքնակամ ձգտի խորությամբ ուսումնասիրել ու յուրացնել հանձնարարված ստեղծագործությունները:

Հետազոտության նպատակը

«Պետրոս Դուրյան» թեմայի ուսումնասիրման արդյունավետությունը ավագ դպրոցում:

Հետազոտության խնդիրները

1.Ուսումնասիրել «Պետրոս Դուրյան» թեմային առնչվող սկզբնաղբյուրները, լուսաբանել բանաստեղծի կյանքի բախտորոշ դեպքերը, որոնք նշանակություն են ունեցել նրա համար և դարձել են ստեղծագործելու շարժառիթները:

2. Բացահայտել ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ուղիները, որոնք կնպաստեն սովորողների ինքնուրույն հետազոտական-որոնողական աշխատանքների կազմակերպմանը:

3. Պարզել թեմային հատկացված դասաժամերի ընթացքում սովորողների համագործակցային աշխատանքների առանձնահատկությունները:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Հարգս չգիտցան, բայց պիտի փնտրեն զիս. . .

Պետրոս Դուրյան

Պետրոս Դուրյանը նոր էջ բացեց հայ գրականության մեջ՝ դառնալով մեր քնարերգության ինքնատիպ և պայծառ դեմքերից մեկը: Նա տարբերվեց իր նախորդներից ու ժամանակակիցներից և չկրկնեց ոչ մեկին՝ վերականգնելով միջնադարյան քնարերգության հետ խզված կապը: Իրավացի է Պարույր Սևակը. «Դուրյանը մեր նոր քնարերգության առաջին մեծն է և միշտ էլ կմնա վերջինի կողքին, որովհետև նա չի հնանում, ինչպես չեն հնանում ժպիտն ու հառաչը, ծիծաղն ու հեծկլտոցը. . . Լինելով մեր նորերի մեջ առաջին մեծը՝ միշտ էլ նա կկանգնի վերջինի կողքին» [6, 81]:

Դուրյանի հմայքը մեծ է. նրա «արցունքոտ տողերը»՝ թարգմանված բազմաթիվ լեզուներով, կարդում են նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում. . .

Քիչ գրողներ կան, որոնց ճակատագիրն այնքան տխուր լիներ, որքան Դուրյանինը: Նա կյանքից հեռացավ՝ քսանմեկը չբոլորած, նույնիսկ առանց լուսանկար ունենալու, հեռացավ՝ երազելով իր տաղերի փոքրիկ ժողովածուի «արև տեսնելը»:

«Ահա ես կ'իջնեմ կամ մոտ եմ իջնելու այն սև հատակ անդունդին մեջ, որո անունը գերեզման կ'ըսեն. արդյոք ինչ պիտի ըսեն ինձ գերեզմանեն անդին (Անշուշտ թշվառ երիտասարդ մը, որ աշխարհ եկավ և միայն իր մեռնիլն զգաց ու մեռավ):

Մեկ քանի պատառ թուղթերու վրա արցունքոտ տողեր գրեր եմ. անշուշտ բարեկամքս զանոնք պիտի պատվին և անոնց Արև տեսցնեն պիտի. . . » [1, 186]:

Տասնամյակներ շարունակ Սկյուտարի ազգային գերեզմանատանը Դուրյանի շիրիմը եղել է ուխտատեղի: Տղաներն ու աղջիկները նրա նվիրական գերեզմանի մոտ են շշնջացել առաջին սիրո երդումները, ծերունիներն ու երիտասարդները երկյուղած համբույր են դրոշմել բանաստեղծի մահարձանին, մարմարե տապանաքարը ծածկվել է

սքանչացումի անպաճույճ տողերով: Արցունքներն ու անձրևը սրբել են դրանք, բայց ամեն անգամ եկել են նորերը և գրել արտասվախառն նոր տողեր [3, 134]:

Համաձայն հանրակրթական ավագ դպրոցի հայ գրականության ծրագրի՝ 10-րդ դասարանի հումանիտար հոսքում նախատեսված է ուսումնասիրել Պետրոս Դուրյանի կյանքը և գրական ժառանգությունը, մասնավորապես թատերգությունները, «Իղձք առ Հայաստան», «Լճակ», «Տրտունջք» բանաստեղծությունները (5 դասաժամ):

Քանի որ հիմնական դպրոցի ութերորդ դասարանի գրականության ծրագրով արդեն իսկ ուսումնասիրվել է «Պետրոս Դուրյան» թեման, և սովորողները բավականաչափ տեղեկություններ ունեն բանաստեղծի և նրա՝ հայրենասիրական, բնության և սիրո, խոհափիլիսոփայական թեմաներով գրված բանաստեղծությունների մասին, առաջին դասաժամի համար նախապես հանձնարարվում է կազմել սահիկաշար Պ. Դուրյանի կյանքի, ստեղծագործության վերաբերյալ: Սովորողների մեջ հետաքրքրասիրությունը զարգացնելու և դասապրոցեսը հաճելի ու ուսուցանող դարձնելու նպատակով կազմակերպվում է «Հայադարան» գրական հաղորդաշարի «Պետրոս Դուրյան» հեռուստահաղորդման դիտում (https://www.youtube.com/watch?v=5YYT5h0PutY), ծրագրային բանաստեղծություններն ուսուցանելիս՝ «Կարդում է Վարդուհի Վարդերեսյանը» ձայնագրության ունկնդրում (https://www.youtube.com/watch?v=vBsS9YsTSqM), Դուրյանի նամակների, հրապարակախոսական հոդվածների և նրա մասին ժամանակակիցների հիշողությունների ուսումնասիրում՝ նախապես հանձնարարելով անհրաժեշտ գրականությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաները լայն հնարավորություններ են տալիս այսօրվա սերնդին՝ բազմակողմանիորեն ուսումնասիրելու և պատրաստելու ցանկացած թեմա, որը և ավելի գրավիչ ու յուրօրինակ է դարձնում դասապրոցեսը:

Քնարական բանաստեղծությունների ուսուցմանը մեծապես նպաստում է բանաստեղծի տրամադրության, բանաստեղծության երևան գալու դրդապատճառների բացահայտումը:

Անկրկնելի և չափազանց պատկերավոր է «Լճակ» բանաստեղծության մասին Պարույր Սևակի գնահատականը. «Դուրյանի աշխարհում լճակ կա,և ի՞նչ լճակ: Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները, Դուրյանի «Լճակ»-ով կարելի է

վերստեղծել դրանք: Նա մեզ իր օրինակով մտերմացրեց այդ «մելամաղձոտ լճակ»-ին, ինչպես նաև սովորեցրեց «գրավիլ, լռել ու խոկալ» [6, 79]: Բանաստեղծությունը ինքնակենսագրական-ինքնաճանաչման արվեստի հազվագյուտ նմուշ է, և այն գրելու շարժառիթն անձնական է, առանց որի իմացության անհնար է բանաստեղծության վերլուծությունն ու մեկնաբանությունը: Նախքան բանաստեղծության ուսուցումը սովորողներին հանձնարարվում է նախապես ուսումնասիրել և մեկնաբանել հատվածներ Արշակ Չոպանյանի «Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը» մենագրությունից: Բազմավաստակ հայագետը, գրողն ու գրականագետը վկայակոչում է վաղամեռիկ բանաստեղծի բարեկամներից մեկի պատմածը. «Անգամ մը, արդեն ծանրապես հիվանդ, Չամլճա կ'երթա վերջին պտույտ մ'ընելու. ետ դարձած ատեն կհանդիպի գինով մը, որ, անոր դժգույն դեմքը և դանդաղկոտ քայլվածքը տեսնելով, կ'ըսե՝ «Աս ալ երթալոց է»: Դուրյան այդ խոսքին տպավորության տակ տուն դառնալուն պես կնստե ու կգրե իր զմայլելի «Լճակը» [4, 623]:

Ուշագրավ է նաև անվանի դերասանուհի Ազնիվ Հրաչյայի վկայությունը. «Այդ միջոցին ներս մտավ պատանի մը՝ երկար հասակով ու երկար վզով, ուներ երկայն քիթ, գունատ էր: Մոխրագույն ու շատ մաշած զգեստ էր հագած: Թևին տակ՝ տետրակ մը: Երբ երևցավ, դերասանուհիները սկսան ծիծաղիլ՝ ըսելով. « Քա, Թերեզա, քուկինդ եկավ»: Իսկ Թերեզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինծի պետք չէ, շուտով կմեռնի» [4, 624]:

Այն կարծիքը, թե Պետրոս Դուրյանի պոեզիան նրա հիվանդության արդյունքն է, սեփական մահվան և դատապարտվածության ինքնազգացողությունը, մակերեսային է և միակողմանի: Իրականում ճիշտ հակառակն է՝ նրա հիվանդությունը նրա պոեզիայի արդյունքն է և հետևանքը: Դուրյանը առաջինը հայտնագործեց մարդկային «ես»-ի և նրա ճակատագրի թեման: Անհատի թեման մեր պոեզիայի մեջ մտավ Պետրոս Դուրյանի կողմից, և կարող ենք ասել, որ հայկական լիրիկան սկսվում է նրանից [2, 234]:

Պետրոս Դուրյանը խոհափիլիսոփայական խառնվածքի բանաստեղծ է: «Լճակ» բանաստեղծության մեջ բնության չքնաղ բեկորը՝լճակը, հանդես է գալիս որպես բանաստեղծի խռովահույզ սրտի հանգրվան: Միաձուլվելով լճակի հետ՝ նա ձգտում է գտնել այն, ինչից ինքը զուրկ է՝ «գրավիլ, լռել ու խոկալ»: Կնճիռներով ծածկված է

ճակատը բանաստեղծի, խոցված է սիրտը, այսինքն՝ ընդգծվում է բանաստեղծի մելամաղձի պատճառը՝ հոգու մահացու խոցվածությունը: Նրան խոցողը որևէ կոնկրետ էակ չէ, այլ, կարելի է ասել՝ երկրային կյանքը [2, 240]:

Շատերը զիս մերժեցին...

«Շատերը» այստեղ նշանակում է բոլորը, ողջ իրականությունը, նրան շրջապատող կարծր ու անթափանցելի աշխարհը:

«Քնար մ'ունի սոսկ»-ըսին:

Քնարը պոեզիայի խորհրդանիշն է, որը տեղ չունի արտաքին աշխարհի մեռած իրականության մեջ, իրականություն, որի մեջ բացակայում է սերը:

Հոն հրդեհ կա, ո՜չ մատյան...

Սիրո իմաստաբանական համարժեքը «հրդեհն» է, որը վերածվել է «մոխրի», մնացել է «հիշատակ», ներքին աշխարհում այն վերջ չունի (բոց անհուն) [2, 246]:

...Զի քու խորքիդ մեջ անձկավ,

Հուսահատ մը նայեցավ...

Չքացել է «գեղուհին», միայնակ բանաստեղծի հոգին նայում է լճակի մեջ այս անգամ առանց հուզումի, առանց «ապշելու», «հուսահատ»:

Սովորողները գալիս են այն եզրահանգման, որ «Լճակ» բանաստեղծությունը կյանքից, սիրուց մերժված բանաստեղծի խորազգաց հոգու պատմությունն է՝ մարմնավորված բնության զմայլեցուցիչ պատկերների մեջ:

Դուրյանի քնարերգությունը ըմբռնելու ամենառեալ բանալին տալիս են նաև ներքին սուր դրամատիզմով հագեցած նրա նամակները (ամենահուզիչը իր դասընկեր Ա. Լուսինյանին գրած վերջին նամակն է): Մեծ հետաքրքրություն են առաջացնում Պ. Դուրյանի և Վ. Լութֆյանի անկեղծ ու ջերմ ընկերության մասին նամակները: Ընկերոջ՝ Վարդանի մահը մեծ կորուստ էր Դուրյան համար, որի անմիջական տպավորության տակ էլ գրում է «Տրտունջք» բանաստեղծությունը: 1871թ. հուլիսի 5-ի նամակում բանաստեղծը գրում է Տիգրան Ադամյանին. «Դու ինձ հիշեցուցեր էիր, որ իր հողակույտի վրա փունջ մը ծաղիկ սփռեմ, ես դժոխքի մը անեծք Աստծո անվանը վրա թափեցի, ավելի աղեկ չըրի՞, ծաղիկը կը թոռմի, սակայն անեծքս կողը խրվեցավ:

. . . Կանիծես աշխարհը, բարեկա՛մ, արդեն ինքն անիծյալ է;

Ա՜հ, թողեք, որ հոգեբուխ հառաչով մը Աստված դղրդեմ. . . անհունության մեջ եմ ընկած, հարկ է, որ լռեմ. . . » [1, 164]:

Ակնհայտ է նամակի և բանաստեղծության գաղափարական աղերսը:

«Տրտունջք» բանաստեղծությունը Դուրյանի խոհափիլիսոփայական մտորումների կիզակետն է: Այն բաղկացած է երեք մասերից: Առաջին մասը՝ 1-26 տողերը, երկրորդը՝ 27-47, երրորդը՝ 47-58: Բանաստեղծության մեջ կան երեք կենտրոնական կերպարներ՝ Աստված-Աշխարհ-Հոգի («Ես»-ը) [2, 249]: Մահամերձ բանաստեղծը հրաժեշտի խոսքը հղում է «Աստծուն» և «Արևին», գտնվում է «սանդուղքի» ներքևում, իսկ վերևում աստղերն են, որոնք անբիծ ու թշվառ հոգիների ողբագին անեծքներ են, որ թռչում են երկնքի ճակատն այրելու, սակայն դառնում են չարիքների արմատը հանդիսացող Աստծու հրահատ զենքերն ու զարդերը: Աստված այստեղ ընկալվում է որպես Հայր-Աստված. Նա կարող է պատժել «մեղավոր» որդուն, որը Հոր կամքի փոխարեն դրել է իր կամքը՝ հյուլեի «հսկա խոկը», նրա ձգտումը դեպի երկինք, աստղերի սանդուղքը:

Ողջունելով Աստծուն՝ նա ցանկանում է անցնել իրենց միջև բացված վիհը, նրան ընդունել որպես կյանքի պահապան:

Մահվան դռան մոտ բանաստեղծին ժպտացող Աստված պարտավոր է նրա առջև բացել իր խոստացած կյանքի դուռը, «կյանք մ’անհուն շողի, բույրի,աղոթքի» [2, 255], հակառակ դեպքում ինքը կդառնա մի շանթ, անեծք, կխրվի նրա կողը և կանվանի Աստված ոխերիմ: Արտահայտվում է բանաստեղծի զայրագին բողոքը անարդար աշխարհի դեմ:

…Ո՜հ,կայծ տըվեք ինձ, կայծ տըվեք ,ապրիմ…

Մեծ է ապրելու տենչը:

Բանաստեղծը դիմում է մարդկանց, բայց նկատի ունի Աստծուն:

Աստծու կողմից կյանքի խոստանալը և չկատարելը վերջին մասում վերածվում է բնության կողմից սիրո խոստման չկատարմանը:

Ո՜հ, նոքա ամենքը զ’իս ծաղրեր են…

Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն…

Նա իրեն հեռացած, օտարացած է գտնում ոչ միայն մարդկանցից, այլև բնությունից:

Աշխարհը՝ լքված իմաստից, կյանքից, սիրուց և Աստծուց, վերածվում է ծաղրի: Ոչ թե Աստված է ծաղրում աշխարհին, այլ Աշխարհն ինքն է դառնում «ծաղր»՝ ի հակադրություն Աստծուն[2, 269]:

Սովորողները, ուսումնասիրելով «Տրտունջք» բանաստեղծությունը, նկատում են, որ բանաստեղծի խոհերն ու ապրումները ուժգին հորդում են, մերթ փոթորկվում են, մերթ հանդարտվում: Ի վերջո բանաստեղծը հանգում է այն ճիշտ հետևության, որ իրեն շրջապատող աշխարհը լի է ամեն տեսակ դառնություններով, ուստի ազնիվ մարդիկ այդտեղ երջանիկ լինել չեն կարող, նրանց սպասում են միայն տանջանք, տառապանք:

Այսպիսով՝ «Տրտունջք» բանաստեղծությունը ուղղված է ոչ միայն Աստծու, այլև դաժան և անարդար աշխարհի դեմ:

Սովորողները հետազոտական-որոնողական աշխատանքի արդյունքում դուրս են գրում պատկերավորման-արտահայտչական միջոցները: Բացատրում են, որ թեպետ բանաստեղծության ամբողջական մասերը՝տները, առանձնացված չեն, բայց ունեն կանոնավոր ռիթմավորում և հետաքրքիր հանգավորում: Բանաստեղծության յուրաքանչյուր տող բաղկացած է տասը վանկից, որոնք կազմում են երկուական երկվանկ և եռավանկ ոտքեր: Հանգավորված են միայն կից զույգ տողերը, կան ճշգրիտ և մոտավոր հանգեր:

Ուսուցման ժամանակ շատ կարևոր է «Լճակ», «Տրտունջք» բանաստեղծությունների վերաբերյալ հարցադրումների և առաջադրանքների կատարումը:

«Լճակ»

1.Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը:

2.Բանաստեղծը անձնավորում է լճակը. հռետորական հարցման միջոցով բանաստեղծը հաղորդակցվում է լճակի հետ, մենախոսությամբ արտահայտում իր խոհերն ու տրամադրությունները: Ընթերցել և մեկնաբանել:

3.Իր հոգեկան աշխարհը համեմատում է մտերիմ դարձած մելամաղձոտ ու տխուր լճակի լուռ ու խոկուն տեսքի հետ. նշել նմանություններն ու տարբերությունները:

4.Ո՞ր տողերում են արտահայտված՝

-բանաստեղծի սերը մնացել է անարձագանք,

-բանաստեղծի արժանապատվության նվաստացման զգացումը:

5.Մեկնաբանել «Հոն հրդեհ կա, ո՜չ մատյան» գեղարվեստական պատկերի իմաստը:

6.Դուրս գրել պատկերավորման-արտահայտչական միջոցները. մեկնաբանել դրանց դերը: Բացատրել հռետորական հարց, հռետորական դիմում, հռետորական բացականչություն տեսական հասկացությունները և ցույց տալ բանաստեղծական օրինակով:

7.Կազմել «Լճակ» բանաստեղծության բառարան:

«Տրտունջք»

1.Համեմատել Ֆրիկի «Գանգատ» և Պ. Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունները, նշել նմանություններն ու տարբերությունները:

2.Ընթերցել և մեկնաբանել վշտահար, մահամերձ բանաստեղծի հրաժեշտը Աստծուն և Արևին:

3.Ինչու՞ է բանաստեղծը մեղադրում Աստծուն:

4.Ընթերցել և մեկնաբանել հետևյալ տողերը՝

-բանաստեղծի զայրագին բողոքն ու ընդվզումը,

-Դուրյանի կենսասիրությունը,

-հուսալքությունն ու հուսահատությունը:

5.Մեկնաբանել «Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...» տողը:

6.Դուրս գրել բանաստեղծության մեջ օգտագործված պատկերավորման-արտահայտչական միջոցները. բացատրել դրանց դերը: Բանաստեղծությունից խմբավորել ճշգրիտ և մոտավոր հանգավորման օրինակներ:

7.Կազմել «Տրտունջք» բանաստեղծության բառարան:

Նյութի մատուցման նման եղանակն անհամեմատ բարձրացնում է գրականության դասի արդյունավետությունը: Սովորողներին ոչ թե պատրաստի գիտելիքներ պետք է հաղորդել, այլ հարկավոր է նրանց մղել հետազոտական-որոնողական աշխատանքի, որը մեծ նշանակություն ունի սովորողների ակտիվ մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Միևնույն ժամանակ աշխատանքը բնագրի վրա նպաստում է սովորողների բանավոր խոսքի մշակմանն ու հարստացմանը:

Հինգերորդ դասաժամին նպատակահարմար է անցկացնել թեմայի ամփոփում՝ համագործակցային դասի տարրերով:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ամրապնդել Պետրոս Դուրյանի կյանքի և ստեղծագործության մասին սովորողների գիտելիքները:

2. Կարողանալ մեկնաբանել և արժևորել Դուրյանի քնարերգությունը, արվեստը:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանաստեղծությունները ընկալելու, վերլուծելու, արևմտահայերենը արևելահայերենի վերածելու կարողությունների և հմտությունների ձևավորում: Համագործակցային աշխատանքի հմտությունների զարգացում:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

1. Կամրապնդեն Պետրոս Դուրյանի կյանքի և ստեղծագործության մասին գիտելիքները:

2. Ձեռք կբերեն մեկնաբանելու, վերլուծելու, բնագրային հատվածները արևմտահայերենից արևելահայերենի վերածելու կարողություններ:

3. Կարժևորեն Պետրոս Դուրյանի բանաստեղծական արվեստը:

4. Կզարգացնեն հաղորդակցական և համագործակցային հմտություններ:

ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ: Պետրոս Դուրյանի դիմանկարը, բնագրեր, պաստառ:

ՄԵԹՈԴՆԵՐ, ՀՆԱՐՆԵՐ: «Պրիզմա», խմբային աշխատանք, «Եռամաս օրագիր», 5-րոպեանոց ազատ շարադրանք:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ և ՄԻՋՈՑՆԵՐ: A1 և A4 ձևաչափի թղթեր, գունավոր նշագրիչներ, կպչուն գունավոր թերթիկներ:

ԸՆԹԱՑՔԸ- ԽԻԿ+Ա համակարգի կիրառում:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Խթանման փուլում ուսուցիչը կառուցում է «Պրիզմա» (բազմանիստ)՝ Դուրյան մեկնաբառով (3 րոպե): Պրիզմայի բովանդակությունը կախված է այն բանից, թե ինչ բառեր, գաղափարներ կհայտնեն սովորողները: Վերջիններս սկսում են թվարկել այն բառերն ու արտահայտությունները, որոնք առաջինն են գալիս իրենց մտքին:

Պրիզմայի հիմնական նպատակը հաղորդվող գաղափարի, հասկացության վերաբերյալ սովորողի՝ ենթագիտակցական ոլորտում եղած մտքերի վերհանումն է:

Սովորողներին տրվում է 2 րոպե ժամանակ, որպեսզի նրանք կազմեն մեկ նախադասություն՝ իրար կապելով պրիզմայի մեկնաբառը և վերջնաբառը:

Սովորողները ձևավորում են պաստառ՝ կպչուն թերթիկների վրա ներկայացնելով իրենց ինքնուրույն հետազոտական-որոնողական աշխատանքները՝ «Մեծերը՝ Պետրոս Դուրյանի մասին», «Դուրյանի կարծիքը թատրոնի մասին», «Դուրյանի բարձր գնահատականը եվրոպական գրողների մասին» թեմաներով (3 րոպե):

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանվում է 4 խմբի (2 րոպե): Կազմակերպվում է աշխատանք փոքր խմբերով: ՈՒսուցման կազմակերպման այս ձևը արդյունավետ է դարձնում նյութի յուրացումը և ամփոփումը: Փոքր խմբերով աշխատելիս սովորողները խուսափում են միայն պասիվ դիտողի և լսողի կարգավիճակից: Փոխարենը նրանք հնարավորություն են ստանում հաղորդակցվելու դասընկերների հետ, ակտիվորեն մասնակցելու դասի ընթացքին, համատեղ աշխատելու, իրարից սովորելու, ինքնադրսևորվելու, քննարկելու, բանավիճելու և այլն:

Յուրաքանչյուր խմբի տրվում է 2-ական առաջադրանք՝ հետևյալ պահանջներով.

1. Պետրոս Դուրյանի նամակներից և հրապարակախոսական հոդվածներից ընտրված հատվածը ներկայացնել «Եռամաս օրագիր» մեթոդով:

Արևմտահայերեն	Արևելահայերեն	Մեկնաբանություններ

2. Վերլուծել կամ մեկնաբանել և արտասանել հանձնարարված բանաստեղծությունը:

Առաջին խմբի հանձնարարություն

1. «Թատրոնը հայելի մ’է, որուն մեջ մարդս կրնա իր ճշմարիտ պատկերը տեսնել: Սրտի և մտքի բարոյական զարգացմանը փափագողը պետք է թատերասեր ըլլա, կամ այն, որ թատերասեր է, ուրեմն բարոյականության ծավալման ալ փափագող է» [1, 114]:

2. Թվել Դուրյանի դրամաները, տեղեկություններ Դուրյանի թատերգական երկերի վերաբերյալ:

Երկրորդ խմբի հանձնարարություն

1. «Ես, որ աշխարհի մեջ միայն երգերը շատ սիրեցի, կուզեմ, որ իմ վերջին շունչս ալ երգ մ'ըլլա. . .

Ափսո՜ս, ահ մ'էր սկիզբս, վա՜խ մ'եղավ վախճանս» [1, 187]:

2. Մեկնաբանել: Ո՞վ է Դուրյանը: Անձնական ճակատագիրն ինչպե՞ս է արտահայտվել բանաստեղծություններում: Արտասանել «Լճակ» բանաստեղծությունը:

Երրորդ խմբի հանձնարարություն

1. «Ա՜հ, գեղեցիկ կյանք մ'ալ կա. սերն է այդ. «Երգել, աղոթել ու սիրել»:Ա՜հ, ի՜նչ բանաստեղծական կյանք, ի՜նչ կատարյալ կյանք» [1, 185]:

2. Արտասանել և վերլուծել «Տրտունջք» բանաստեղծությունը:

Չորրորդ խմբի հանձնարարություն

1. «Հուսահատ կ'ըսեք: Երբեք մի՛ մտաբերեր, որ ես հուսահատ եմ. բնա՜վ, բանաստեղծ մը մահվանե չը սոսկար. այն ատեն իրավունք ունեի ցավելու, երբ ամենքն անմահ ըլլային, և ես միայն մահկանացու» [1, 171]:

2. Վերլուծել «Իղձք առ Հայաստան» բանաստեղծությունը:

Աշխատանքի համար տրվում է 15 րոպե ժամանակ: ՈՒսուցիչը աշխատանքի ընթացքում անընդհատ մոտենում է սովորողներին, այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները, կազմակերպում են քննարկումներ, խրախուսվում է բոլորի մասնակցությունը:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Կշռադատման փուլում հանձնարարվում է գրել 5-րոպեանոց ազատ շարադրանք՝ «Նամակ Պետրոս Դուրյանին», «Երբ կարդում եմ Դուրյան», «Դուրյանը՝ իմ պատկերացմամբ», «Եթե Դուրյանն ապրեր մեր օրերում» թեմաներով:

Այս աշխատանքի նպատակն է նպաստել սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և երևակայության զարգացմանը: 5-րոպեանոց շարադրանքի միջոցով սովորողները ամփոփում են թեմայի շուրջ իրենց մտքերը, իսկ ուսուցիչը պատկերացում է կազմում դասի մտավոր ներգործության մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ (ԱՆԴՐԱԴԱՐՁ) (8 րոպե): Ներկայացվում է եռասյունակ աղյուսակ:

Ի՞ՆՉ	ԻՆՉՊԵ՞Ս	ԻՆՉՈՒ՞

Սովորողները եռասյունակ աղյուսակի մեջ լրացնում են, թե ամփոփիչ դասաժամին ինչ աշխատանք կատարեցին, ինչպես և ինչու: Այս ամփոփումով իմաստավորվում են սովորելու գործընթացը, նրա տրամաբանությունը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ (5 րոպե): Ինքնագնահատում և փոխադարձ գնահատում 10 միավորային սանդղակով:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (2 րոպե): Պատրաստել գրքույկ՝ «Հարցազրույց Պետրոս Դուրյանի հետ» վերնագրով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերոբերյալը՝ հանգեցինք հետևյալ եզրակացության, որ ավագ դպրոցում «Պետրոս Դուրյան» թեմայի դասավանդումը արդյունավետ կազմակերպելուն նպաստում են՝

1. թեմային առնչվող սկզբնաղբյուրների ուսումնասիրումը,
2. բանաստեղծի համար մեծ նշանակություն ունեցած և ստեղծագործելու շարժառիթները դարձած կյանքի բախտորոշ դեպքերի լուսաբանումը,
3. ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ներքոհիշյալ ուղիների բացահայտումը.

   ա) բանաստեղծությունների վերաբերյալ հարցադրումների, առաջադրանքների կատարում,

   բ) արևմտահայերենը արևելահայերենի վերածում,

   գ) բնագրի վրա աշխատանքի կազմակերպում,

   դ) արևմտահայերեն-արևելահայերեն բառարանի ստեղծում:

Պարզեցինք, որ հատկացված դասաժամերի ընթացքում համագործակցային աշխատանքի ժամանակ սովորողների մոտ զարգանում են միմյանց հետ հաղորդակցվելու, դասի ընթացքին ակտիվորեն մասնակցելու, վերլուծելու, մեկնաբանելու, իրարից սովորելու, ինքնադրսևորվելու, արժևորելու, քննարկելու, բանավիճելու հմտություններն ու կարողությունները, քննադատական մտածողությունը: Դասավանդման այս ձևը ընտրելու նպատակը յուրաքանչյուր սովորողի փոխներգործուն ընդգրկվածությունն է դասի ընթացքում, ինչը ճանապարհ է դեպի գիտելիքի յուրացման նոր մակարդակ և այդ գիտելիքը գործնականում կիրառելու հմտության ձևավորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դուրյան Պ., Երկերի ժողովածու 2 հատորով, հատոր 1, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1971թ., 371 էջ:

2. Էդոյան Հ., «Պոեզիայի երկակի տեսողությունը», Զանգակ, Երևան, 2020թ., 368 էջ:

3. Հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագրեր, Երևան, 2009թ., 61 էջ :

4. Շարուրյան Ա., Սկյուտարի սոխակը (Պետրոս Դուրյան), «Սովետական գրող», Երևան, 1977թ. 138 էջ:

5. Չոպանյան Ա., Պետրոս Դուրանի կյանքն ու գործը, Երկեր, «Սովետական գրող»,Երևան, 1988թ., 862 էջ:

6. Սարգսյան Ս., Պետրոս Դուրյան, Հայպետհրատ, Երևան, 1959թ., 142 էջ:

7. Սևակ Պ., Երկերի ժողովածու 3 հատորով, հատոր 3, «Սովետական գրող», Երևան, 1983թ., 592 էջ:

8. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, քաղաք Վանաձոր, 2008թ., 102 էջ: